

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր ըստ ին 2 կոպեկի.

ՆԵՐԿԱՅ 1892 ԹԻՒԱԿԱՆԻՆ

20-ՐԴ ՏԱՐԻ

20-ՐԴ ՏԱՐԻ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՍԱՆԵՐՈՐԴ ԼՐԱԿՈՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիրքով և նոյն պրոգրամայով: Մեր ստանում ենք սեփական
կան ՀԱՌԱՊԵՏՆԵՐ.

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ.,
հինգ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., չորս ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ.,
երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

Գրվել «ՄՇԱԿ»-ը կարելի է ԽՊԱՍԿԱՍՏԱՆԸ (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների անկիւ-
ռում, Թաւաշիւի տանը).

Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ը գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ. Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են թէ հայերէն, թէ ռուսերէն և թէ օտար լեզուներով,
բառին վճարվում է 2 կոպեկի.

«Մշակ» առաջին երեսի վրա մասնաւոր յայտարարութիւններ չեն տպագրվում, այլ տպա-
գրվում են միմյան լրագիրների յայտարարութիւնները, մահացուցականները և պաշտօնական հաստա-
տութիւնների յայտարարութիւնները, որոնց համար կրկնակի է վճարվում: Մահացուցակի տպագրելը
առաջին երեսի վրա արժէ 4 ռուբլի, իսկ չորս և հինգ երեսի վրա՝ 2 ռուբլի:

ВЫСОЧАЙШЕ разрѣшенный 12 Декабря 1891 г. второй и послѣдній выпускъ билетовъ
Благотворительной Лотереи въ пользу нуждающагося населенія въ мѣстностяхъ, пострадавшихъ
отъ неурожая 1891 года.

Второй выпускъ билетовъ Благотворительной Лотереи будетъ произведенъ на сумму
6.000.000 руб. на точномъ основаніи правилъ, содержащихся въ ВЫСОЧАЙШЕ одобренномъ 18
Ноября 1891 г. положеніи о Благотворительной Лотерей.

О срокъ, когда будетъ произведенъ тиражъ выигрышей, будетъ объявлено въ свое время.

Продажа билетовъ и отдѣльныхъ купоновъ будетъ производиться: въ Государственномъ
Банкѣ, его конторахъ и отдѣленіяхъ, въ отдѣленіяхъ Сберегательной Кассы Банка въ С.-Пeters-
бургѣ и Москвѣ, въ уѣздныхъ казначействахъ, въ учрежденіяхъ Почтово-Телеграфнаго вѣдомства
и Краснаго Креста, въ кассахъ станцій желѣзныхъ дорогъ, въ частныхъ банкахъ и банкирскихъ
конторахъ и проч.

О днѣ открытія продажи билетовъ въ каждомъ городѣ будетъ объявлено отдѣльно, вмѣстѣ
съ перечисленіемъ тѣхъ мѣстъ, въ коихъ продажа сія будетъ производиться.

(№ 19)

4—4 (2. 4.)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Հ. Յ. ՕՐԲԵԼԻ

Սօլալակայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 10 ժ. և երկուցիս 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ:
(№ 145)

25—150

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Կապաշ» լրագիրը հայ եկեղեցական ընտրու-
թիւնների մասին.— ՆԵՐԿԱՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Հայաս-
տանի ներկայացուցիչները. Ներքին Լուրեր.—
ԱՐՏԱԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Մի առաջադիմական
շարժում պարսկահայերի մէջ. Տեղեկութիւններ
Կ. Պոլսից. Արաքսին լուրեր.— ՀԵՌԱՊԵՏՆԵՐ.—
ՏԵՂԵԿԱՅՈՅՈՅ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

«ԿԱՊԱՇ» ԼՐԱԳԻՐԸ ՀԱՅ ԵՆԿԵՂԵՍԱ- ԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խոսելով թէ Բուլթայի քաղաքային ընտրու-
թիւնների մասին և թէ հայ եկե-
ղեցական ընտրութիւնների մասին, «Կա-
պաշ» լրագիրն ասում է.

«Բուլթայի քաղաքային ընտրութիւն-
ների հետ միաժամանակ կատարվում են
ինքնավարական բոլորովին մի այլ շրջա-
նում տարօրինակ երևոյթներ, թէև պա-
կաս աղմուկով, քան Բուլթայիսում: Յայտնի
է որ հայոց եկեղեցին Ռուսաստանում ներ-
կայացնում է մի ինքնավար կազմակերպու-
թիւն, բաւական լայն ինքնավարական ի-
րաւունքներով: Պէտք էր սպասել, որ եկե-
ղեցական գործերում ամենից քիչ կարող էր
հանգես գալ կուսակցութիւնների կրօնա-
մաքառում, կամ իշխանութիւնների փո-
խադարձ մրցում: Սակայն երկու հեռագիր-
ներ, որոնք տպված են մեր լրագրի վերջին

համարում, վկայում են այն բանի մասին,
որ այդպէս ևս ինչ որ անկարգ բան է կա-
տարվում: Յանձնաժողովը, որն ուղարկված
էր երկրի բարձր հոգևոր իշխանութիւնից
արտակարգ արկածը ընկնելու համար, ան-
հրաժեշտ գտաւ հեռացնել իրանց պաշտօն-
ներից երեք քահանաներին, բայց հէնց որ
յանձնաժողովը թողնում է Թիֆլիս, տե-
ղական հոգևոր իշխանութիւնը հրաւի-
րում է նոյն երեք քահանաներին կրկին
ստանձնել իրանց պաշտօնները. և յանձնա-
ժողովը տպագրական միջոցով դրա դէմ իր
բողոքն է յայտնում: Նոյն անտրոշ մաքա-
ռումն առաջ է դնում և աւելի նշանաւոր
գործում, այն է Թիֆլիսի եկեղեցական
պատգամաւորների ընտրութեան գործում:
Այդպէս կատարվում են անցքեր, որոնք
յիշեցնում են Բուլթայի մէջ կատարված
անցքերը: Մի քանի եկեղեցիներում կայա-
ցած ընտրութիւնների դէմ բողոքներ են
ներկայացվում: Հոգևոր իշխանութիւնն
ընդ մին, այն է բարձր իշխանութիւնը
վճռում է անհետանալ թողնել այդ բողոք-
ները, իսկ միւս հոգևոր իշխանութիւնը,
թեմականը՝ հրամայում է բեկանել ընտ-
րութիւնները և նորերը կատարել: Այդ
կարգադրութեանը նմանապէս հեռագրով
պատասխանում են Էջմիածնից: Մենք հե-
ռու ենք իշխանութիւններից մինի կամ
միւսին, որոնց մէջ անհամաձայնութիւններ
են ծագել մեր հաւանութիւնը յայտնե-

լուց, բայց մենք չեն կարող փաստերը չը
յիշատակել և նրանց առիթով մեր ցաւը
չարտայայտել:

Ապա «Կապաշ» լրագիրը խօսելով այն
բանի վրա թէ ինչ կապ կայ մամուլի և
հասարակաց ինքնավար մարմինների մէջ,
աւելացնում է.

«Պէտք է պահանջել, որ մամուլը խղճ-
մաւոր և լուրջ կերպով վերաբերվի դէպի
ամեն տեսակ ընտրութիւնները: Մեզանից,
որպէս Թիֆլիսում լոյս տեսնող ռուս թեր-
թից, ի հարկէ չէ կարելի սպասել ան-
միջական մասնակցութեան թէ Բուլթայի
քաղաքի ընտրական գործերին և թէ
հայոց եկեղեցական համայնքի ընտրու-
կան գործերին. բայց մեզ համար թանկ
է նոյն իսկ ինքնավարական սկզբունքը
իր բազմակողմանի արտայայտութիւններով:
Ինքնավարութիւնը զոյգվում է ունի, իսկ
նրան մասնակցից ոյժերից կախած է պա-
հէկ նրան պատշաճաւոր բարձրութեան
վրա և խուսափել այն բոլոր արգելադի-
միջոցներից, որոնք կարող են ինքնավարու-
թեան անունը կոտորել:

Ռուս թերթին այսպէս է վերջացնում իր
խօսքը. «Բուլթայի քաղաքը շուտով պիտի
ընտրէ իր քաղաքագլուխը, իսկ հայոց ե-
կեղեցին շուտով պիտի ձեռնամուխ լինի
մի անհամեմատ աւելի նշանաւոր գործին,
այն է հայոց եկեղեցու գլուխը պիտի
ընտրէ: Ոչ մի կերպ իրար մէջ չը համե-
մատելով այդ երկու տեսակ ընտրութիւն-
ները, ցանկանալ միայն, որ թէ առաջին-
ները և թէ վերջինները կրէին աւելի լուրջ
բնաւորութիւն և իրանք ընտրողներն ըմ-
բռնէին գործի ամբողջ փնտրութիւնը, վերա-
բերվելով նրան պատշաճաւոր պատկառան-
քով»:

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՅԻՉՆԵՐԸ

Ինչպէս երևում է Ազգեան պատրիարքի հրա-
հանքից, արդէն Էջմիածնի հրաւիրագրերը ուղարկ-
ված են Հայաստանի գաւառները, որ թիւրքաց
հայերն էլ իրանց սեփական ներկայացուցիչներն
ուղարկեն կաթողիկոսական ընտրութեան մաս-
նակցելու համար:

Այդ ուղարկելի երեսիլի համար շնորհակալ
պիտի լինի տեղակալ երեմիա եպիսկոպոսին և
ամբողջ սինոդին, որոնք եւսանդուն կերպով այդ
խնդիրը ձեռք առան և իր ժամանակին հրաւի-
րագրեր ուղարկեցին պատրիարքարան, հրաւի-
րաւարդով թիւրքաց հայերին՝ շնորհ բերել հայ-
րապետական ընտրութեան:

Կ. Պոլսի պատրիարքարանը երկար ժամանակ
այդ հրաւիրագրերը իր դիւանատանը պահեց և
չուղարկեց Հայաստանի թեմերը: Դրա պատճա-
ռը հետեւեալն էր: Սահմանադրութեան տրամա-
դրութեամբ հարկաւոր էր գումարել Ազգային ժո-
ղով և նրա քննութեան ենթարկել կաթողիկո-
սական ընտրութեան մասնակցելու և դա՛ն ալ ի
խնդիրը և ապա ուղարկել Էջմիածնի հրաւիրա-
գրերը: Սակայն երկար ժամանակ անհնարին եղաւ
գումարել Ազգային ժողով, որովհետեւ Բ. Դրան
կողմից չէր ստացվում թոյլտւութիւն: Վերջապէս,
ի նկատի ունենալով, որ ժամանակը անցնում է,
պատրիարքարանը ուղարկեց հրաւիրագրերը թե-
մական առաջնորդներին, ստանալով միմյան խա-
ռըն ժողովի, և ոչ Ազգային ժողովի հաւանու-
թիւնը:

Այդ հրաւիրագրերի հետ միասին Ազգեան
պատրիարքը փետրվարի 10-ից ուղարկեց թեմա-
կան առաջնորդներին իր հրահանքը այն մասին
թէ ինչպէս պէտք է թիւրքաց հայերը մասնակ-
ցեն մայիսի 3-ին ընտրութեան:

Այժմ որոշ է հետեւեալը:

1) Իւրաքանչիւր թեմից պէտք է գալ մի հո-
գևորական և մի աշխարհական պատգամաւոր.
հոգևորական պատգամաւորը պէտք է լինի
թեմական առաջնորդը, իսկ եթէ նա անկարող
լինի դալ, իր փոխարէն կարող է ուղարկել մի
հոգևորական ներկայացուցիչ: Աշխարհական ներ-
կայացուցիչը ընտրվում է գաւառական ժողովի
կողմից, այսինքն այն ժողովի կողմից, որը սահ-
մանադրութեան զօրութեամբ, արդէն գոյութիւն
ունի թիւրքաց Հայաստանի թեմական կենտրոն-
ներում:

2) Եթէ ընտրողները իրանց վիճակում ըստ ա-
մենայնի արժանաւոր մարդ չը գտնեն կարող են
աշխարհական պատգամաւոր ընտրել ուրիշ տեղ
այլով մի հային: Մինչև անգամ կարող են իրանց
պատգամաւոր ընտրել այն մարդուն, որը արդէն
մի ուրիշ վիճակում պատգամաւոր է ընտրվել:
Ուրեմն մի պատգամաւոր, համաձայն պատրիար-
քական հրահանգի, կարող է երկու և զուգե՛ւ աւե-
լի ձայն ունենալ:

3) Եթէ ոչ հոգևորական և ոչ աշխարհական
պատգամաւոր չը կարողանան անձամբ գալ
Էջմիածնի, կարող են դրաւոր կերպով յայտ-
նել Էջմիածնի սինոդին, թէ իրանք ում են ար-
ժան համարում կաթողիկոսական գահի համար:
Միայն թէ բացակայ պատգամաւորի դրաւոր
կարծիքը ուղարկութեան կառնով միայն կաթո-
ղիկոսական ընտրութեան նախնական գործողու-
թեան ժամանակ, այսինքն չորս թեմից անհե-
տ և իր ցուցակը պատրաստելիս, իսկ վերջական
ընտրութեան ժամանակ, այն է, երբ պիտի ըն-
տրվեն երկու կաթողիկոսացու, նշանակութիւն
ունեն միմյան անձամբ ներկայ գտնվող պատ-
գամաւորների ձայները, իսկ դրաւոր կարծիքնե-
րը՝ ոչ:

Այսպէս ուրեմն, կաթողիկոսի ընտրութեանը՝
de facto մասնակցելու համար, հարկաւոր է, որ
Հայաստանի ներկայացուցիչները անձամբ ներկայ
լինեն մայիսի 3-ին Էջմիածնում: Ապա թէ ոչ
գրաւոր կարծիքներ ուղարկելով թիւրքաց Հայաս-
տանը համարեալ թէ նոյն արած կը լինի, ինչ
որ անում էր մինչև այժմ Ազգային ժողովը:

Յայտնի է, որ Ազգային ժողովը, իրան թիւր-
քաց Հայաստանի ներկայացուցիչ համարելով, և չու-
ղարկելով թեմերից պատգամաւորներ, ինքը
պատրաստում և ուղարկում էր Էջմիածնի կա-
թողիկոսական ընտրելիների մի ցանկ: Էջմիած-
նում, խորհրդակցական ժողովը այդ ցանկը ուղա-
դրութեան էր աւանում, և դրանից կազմում կա-
թողիկոսական չորս ընտրելիների ցուցակը, կա-
մենալով յարգած լինել Ազգային ժողովի կար-
ծիքը: Սակայն վերջնական ընտրութեան օրը, Էջ-
միածնի պատգամաւորների ժողովը չորսից ընտ-
րում էր նրան, որին ցանկանում էր: Այնպէս որ
այն կաթողիկոսացուն, որը զիցուք, Ազգային
ժողովի ցանկի մէջ առաջին տեղն է բռնում,
կարող է Էջմիածնի ընտրութեան ժամանակ չոր-
բորդ տեղը ընկնել, ուրեմն և չընտրվել: և
ընդհակառակը, այն թեմից անուն, որը Ազգային
ժողովի ցանկում չորրորդ տեղն է բռնում, կա-
րող է Էջմիածնի ժողովում առաջին տեղը բռնել:

Դրա գլխաւոր պատճառն այն է, որ վերջնա-
կան ընտրութեան ժամանակ ձայնի իրաւունք
ունեն միմյան ներկայ գտնվող պատգամաւորնե-
րը, իսկ գրաւոր կարծիքները՝ ձայն չեն կաղ-
մում:

Դրանից հետո է եղակացնել, որ թիւրքաց հա-
յերի պատգամաւորների անձամբ ներկայ լինելը՝
կաթողիկոսական ընտրութեան համադրային տե-
սակէտից, շատ ցանկալի է: Ցանկալի է, որովհե-
տե միայն դրանով կարելի կը լինի վերջնական
ընտրութեան ժամանակ որոշել, թէ աղբի մեծա-
մասնութիւնը ումն է կամենում տեսնել հայրա-
պետական գահի վրա: Իսկ եթէ տեղի հետաւո-
րութիւնը և ձանապարհների ղեկավարութիւնը
պատճառ բռնելով, գաւառներից պատգամաւոր-
ներ անձամբ չը պէտք է գտն, այլ միայն գրաւոր

կարծիքները պիտի ուղարկեն, այն ժամանակ զա-
ղուրս կը գայ համարեա նոյնը, ինչ որ մինչև
այժմ անում էր Ազգային ժողովը՝ ուղարկելով
Թիւրքաց հայերի անունից՝ կաթողիկոսացունքի
մի ցանկ, որը նոյնպէս յարգվում և ուշադրու-
թեան էր առնուիմ էջմիածնի խորհրդակցական
ժողովում:

Ուստի չենք կարող համակրութեամբ չը վերա-
բերել պատրիարքական հրահանգի այն կէտին,
որտեղ նա ասում է. «պատգամաւորաց անձամբ
ներկայութեան ընտրական վերջին գործողու-
թեան պահուն» անհրաժեշտ է կատարելապէս
մասնակցած լինելու համար ընտրութեանս:

Միայն թէ այդ հրահանգի մէջ մի կէտ լաւ չէ
մշակված: Բացառելով: Հրահանգն ասում է, որ
եթէ ընտրողներն իրանց թեմում յարմար մարդ
չեն գտնում, կարող են ընտրել «այլուր բնակեալ
ազգային որ»։ Այնպէս որ, զիցուք Աւաշկերտի
կամ Վանի թեմերը կարող են ընտրել Կ. Պոլիս,
Թիֆլիս, Երևան, Մոսկովա, կամ Վաղարշապատ
ապրող մի հային, ի հարկէ, յայտնելով իր հեռա-
ւոր պատգամաւորին, թէ թեմը կամենում է
որ իր պատգամաւորը ձայն տայ այս կամ
այն կաթողիկոսացունքին: Եւ պատգամաւորը բա-
րոյապէս պարտաւոր է կատարել թեմի այդ պա-
հանջը:

Բայց նոյն հրահանգում ասված է, որ թեմը
կարող է իր պատգամաւոր ընտրել մի այլ թե-
մում արդէն ընտրված պատգամաւորին: Այս-
պիսով կարող է պատահել, որ երկու, զուցէ և
երեք չորս թեմեր իրանց ձայնը տան մի և նոյն
մարդուն, որը կը գայ էջմիածնի երկու, երեք,
կամ չորս ձայններով:

Սակայն ինքն ըստ ինքեան խնդիր է առաջ
գալիս, արդեօք էջմիածնի ընտրողական վերջին
ժողովում մի մարդ կարող է ներկայանալ եր-
կու կամ երեք ձայնով: արդեօք զա ղէմ չի լինի
ընտրողական օրէնսդրութեան: Ահա մի հարց, որը
առանց բողոքի չի կարող լուծուի, պէտք է որոշել
որպէս զի մայիսի 3-ին Թիւրքիայի թիւրքերը չը
Մենք համարձակուում ենք խորհել էջմիածնի սի-
նոդին, որ նա օր առաջ պարզէ այս հարցը, և
եթէ պատրիարքական հրահանգի այդ կէտը
սխալ է կազմած, անմիջապէս հեռագրել Կ.
Պոլիս պատրիարքարանին փոխել հրահանգի այդ
կէտը:

Համոզված լինելով, որ թէ էջմիածնի սինոդը
և թէ նոյն իսկ Պոլսի պատրիարքարանը ամեն
միջոց գործ կը դնեն այդ և զրա նման թիւրքի-
մացութիւնների առաջն առնելու, մենք նախ
քան այս յօդուածի վերջացնելը, չենք կարող
հրապարակով մատնանիլ չանել այն մեծ բարո-
յական նշանակութեան վրա, որ ունեն Հայաս-
տանի ներկայացուցիչների մասնակցելը էջմիած-
նի ընտրութեան գործում:

Շատ տարիներ են արդէն, որ Թիւրքաց հայերի
հեռաւոր թեմերը ի օրօք անմասնակից են մնա-
ցել էջմիածնի հայրապետի ընտրութեան: Այդ
ընտրութիւնը հետաքրքրութիւն և իրարանցում է
յարուցել մի միայն Կ. Պոլսի Ազգային ժողովի
և պատրիարքական շրջաններում:—Իսկ Հայաս-
տանը միշտ անտուրան է եղել այդ բոլորին,
միշտ անմասն է մնացել ամբողջ ազգի կաթողի-
կոսի ընտրութեան:

Իսկ այժմ հրաւեր է կարգացվում հեռաւոր
թեմերին, օգուտ քաղել իրանց իրաւունքներից,
իրանց միջոց մարդիկ ընտրել, ուղարկել մայր
աթոռը, անձամբ մասնակցել սեփական աչքե-
րով տեսնել, և այդպիսով աւելի ամրապնդել այն
բարոյական կապը, որ կայ համազգային կա-
թողիկոսի ընտրութեան և ժողովրդի մէջ: Թիւրքաց
հայերը միշտաւոր կը լինեն, եթէ օգուտ չը քա-
ղեն այս հանգամանքից: Ռուսահայերը զրկա-
ւորաց սպասում են Թիւրքաց հայերի պատգամա-
ւորներին:

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Զոհմարի 6-ի արեւից շնորհակալութիւն օգտին
հետեւեալ անձինք ուղարկել են մեզ հետեւեալ
գումարները. Ներքին-Ախտայից՝ Գեորգ քահանայ
Տէր-Սարգիսեանց, Գ. Սինանեանց, Ս. Աւետի-
սեանց, Ի. Բուռնաշեանց, Կ. Մահմետի վարդա-
նեանց, Զ. Ղարիբեանց, Պ. Մարգարեանց, Ա.
Աղաբեանց, Բ. Աբգարեանց, Ղ. Աւագեանց, Ա.
Աւագեանց, Ա. Յովհաննիսեանց, Գ. Աւոյեանց, Ռ.
Տէր-Գեորգիսեանց, Լ. Միրզա-Բարսեղեանց, Թ. Ա-
ւոյեանց, Մ. Գաւթեանց, բոլորը միասին 20
րուբլի. Ղազարից՝ Զ. Կանչիկի, Փ. Փարզալիբե-
գեան, Գ. Մ. Մէլք-Օսանյանեանց, Ալեքսանդր-

բովսկի, Օ. Կալվէյտ, Մ. Հնչուցով, Բ. Աղասա-
րեանց, Ս. Ղալուսեանց, Ա. Նաղդիկեանց, Ա.
Կիսրէգով, Ե. Մուրադեան, Մ. Ղազարեղեան,
Գ. Թադրամեան, Ս. Էղիշեան, Թ. Քալանթարեան,
Մ. Տէր-Ներսիսեան, Ա. Միրումեան, Զ. Թու-
մանեան, և Ա. Աղասարեան, բոլորը միասին
59 րուբլի, ընդամենը 79 րուբլի, իսկ նախկին
366 ր. 22 կոպէկ գումարի հետ, ունենք այժմ
445 րուբլի, 22 կոպէկ:

Փետրվարի 23-ին, Բարսապ գիւղում, ՂԱՅԱՍԻ
երկրորդ մասի գործակալութեան վիճակային
պատգամաւորներն ընտրվել են՝ ինժեներ Գը-
րիգոր Եարալեանց և Յովհաննէս Աստուածա-
ղանդեանց: Ընտրողական ժողովին Յովհաննէս
քահանայ Տէր-Սաչատուրեան, ինչպէս մեզ գրում
են, վերին աստիճանի անկողնապահութեամբ էր
նախագահում:

Մեզ հեռագրում են, որ ԱՐԴՈՒՆԻ գործակա-
լութեան մէջ վիճակային պատգամաւորներ ընտ-
րված են Մատթէոս Աղնաուրեանց և Սերոբէ
Աղնաուրեանց:

Եւզոբ Մարտինի Զախորով նամակ գրելով
մեզ, խնդրում է մեզ ուղղել այն սխալը, որ մտել
էր «Մշակի» նախընթաց համարում: Պ. Զախորով
յայտնում է, որ փետրվարի 23-ին «Էջմիածնեցի»
եկեղեցու վերնորոշութեան ժամանակ մասնակցել
են ոչ թէ 18 հոգի, այլ 19 հոգի: Այդ լուրը
տպելով, մենք մեր կողմից էլ պարտաւորութիւն
ենք համարում ուղղել մի այլ սխալ՝ նոյն եկեղե-
ցու մէջ կատարված ընտրութեան գործի վերա-
բերմամբ: Մենք տեսլ էինք, որ առաջին ընտրու-
թիւնների ղէմ պ. Զախորովը ձեռքով կազմած
բողոքի տակ ստորագրել էին 70 հոգի, այժմ
մենք իմացանք, որ ստորագրող ծխականները
միայն 52 հոգի էին: Հարցնում ենք. եթէ այդ բո-
լոր 52 հոգի համոզված էին թէ ընտրութիւն-
ները անկասկած էին և բողոքեցին դրանց ղէմ—
ինչի փետրվարի 23-ին այդ 52 հոգուց միայն 19
հոգի էին մտել եկեղեցի վերնորոշութեան կատա-
րելու համար... Ո՛ր մնացին 33 հոգի բողոքա-
տուներէից: Երբևէ նրանք ստորագրեցին բողոքի
տակ առանց ճշմարիտ համոզված լինելու թէ
փետրվարի 2-ի ընտրութիւնները անկասկած էին,
այլ ստորագրեցին, որովհետեւ խնդրում էին ստո-
րագրել:

Հինգրբարի, փետրվարի 27-ին, Թիֆլիսում,
ուսու ամբողջ հոգեւորականութեան և ահալին
ժողովրդի ներկայութեամբ, կատարվեց զենկալ-
ադիւտանտ իշխան Լեւոն Մէլքոնի յուղարկա-
ւորութեան հանդէսը: Զուգարկաւորութեան ներ-
կայ էին՝ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ
Իշխան Ալեքսանդր Միխայլովիչ, պետական խոր-
հրդի անդամ Բարձր Նիկոլայ, կովկասեան կա-
ռավարչապետ օգնական կոմս Տատիշչիկ, Թիֆ-
լիսի նահանգապետ Շերալիձէ և այլ բազմաթիւ
բարձրաստիճան անձինք: Քաջվելով եկեղեցում
պատգամաւոր վերջնապետց յետոյ, դադարը դուրս
բերին եկեղեցուց և տարան ս. Գաւթի վանքը,
որ պէտք է ամփոփվէր հանգուցիւրի մարմինը:
Հանգուցեալ իշխան Մէլքոնի դադարի վրա դըր-
վեցան բազմաթիւ պսակներ, որոնց մէջ աչքի
էին ընկնում հետեւեալները. 1) Նախկին ստորա-
ղիւսիներէից Գաղստանում, 2) Խմբէլի աղնա-
կանութիւնից, 3) Կովկասեան ընկերութիւնից
Բազու քաղաքում, 4) Քուրմայիլ քաղաքից, 5)
Բազու քաղաքից, 6) Թէլաւ քաղաքից, 7) Կայսե-
րական Աշխարհադրական ընկերութեան Կովկա-
սեան բաժնից, 8) Ապշերոնեան 81-րդ հետեւակ
գնդից, 9) Թիֆլիս քաղաքի հրեական ընկերու-
թիւնից, 10) Վրաց զբոսի հրատարակութեան
ընկերութիւնից, 11) Հայոց Բարեգործական ըն-
կերութիւնից, 12) Կովկասեան ժողովրդից, 12)
Գորու գաւառական աշխատանքի ընկերութիւն
և այլ բազմաթիւ ընկերութիւններից, հասարակութիւն-
ներից և բարեկամներից: Պատարադիւն էր Վրաս-
տանի էկզարքի: Ներկայ էր և օտարազան
հոգեւորականութիւնը:

Այս օրերս Թիֆլիսի հայոց դերասանական
խումբը գնաց Բազու՝ այնտեղ ներկայացումներ
տալու նպատակով:

Կ. Պոլսի հայոց մամուլը, որը մինչև այժմ
լուծվել էր պահում կաթողիկոսական հարցի
վերաբերմամբ, արդէն սկսել է դադարել այդ խնդ-
րով:

Մարտի 2-ին, երկուշաբթի օր, Գաղաքային
թատրոնում լինելու է մի կոնցերտ, որը կունե-
նայ և զբաղան բաժին: Կոնցերտին մասնակցում
են տիկին Ֆերտիզ, պ. պ. Սարաջիկ, Եղիազա-
րեան, Լ. Ստոյնիշիկ, Պօզոստիկ, Միրադեան, և
ուրիշները: Ինչպէս երևում է պրոգրամից՝ կոն-
ցերտը շատ հետաքրքրական պիտի լինի, որ
անկասկած կը զբաւէ մեծ բազմութիւն:

Մեզ խնդրում են յայտնել հետեւեալը. «Վաղը,
կիրակի օր, մարտի 1-ին, ցերեկվայ ժամը 11-ին,
Թիֆլիսի Ժողովարանում կայանալու է խորհր-
դակցական ընդհանուր ժողով՝ Թիֆլիսի գործա-
կատարների ընկերութեան նոր կանոնադրու-
թիւնը մշակելու համար»:

ԱՌՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԻ ԱՌԱՋԱՊԻՄԱԿԱՆ ՇԱՐՈՒՄ ՊԱՐՍԿԱՀԱՏԵ-
ՐԻ ՄԵՋ

Պատմական դանազան ճնշող հանգամանքների
շնորհով պարսկահայերի հասարակական կեանքը
միշտ ներկայացրել է մի մտաւորապէս խիստ մեռ-
լային պատկեր, այնպէս որ մի քանի տարի առաջ,
մարդ փոքր ի շատէ դնական հայեացքով նայե-
լով պարսկահայի կեանքի վրա, գալիս էր այն եղ-
բակացութեան, թէ այս խեղճ ժողովուրդը պարսկ
և առաջադիմական ընդունակութիւնից, թէ նրա
մէջ չորացել, ոչնչացել է այն սաղմը, որը տարի-
ներէ ընթացում դարձանալով վերջապէս առաջ
է բերում սոցիալական, հասարակական-բարոյա-
կան վերածնութիւն, որը մի քանի տարվայ ժա-
մանակամիջոցում հիմքից տապալում է հին, բու-
րինական կազմակերպութիւնները և ժողո-
վուրդները հասարակական կեանքին տալիս է,
այսպէս ասած, մի լուրջ, բնաւորիչ կերպարան:

Շատ անգամ, ըստ սովորութեան շատերի, մենք
մեզ թոյլ ենք տալիս այնպիսի ֆեատակար դա-
տողութիւններ յայտնի յետադէմ ուղղութեան
պատկանող ժամուրի միջոցով, որոնք մեր ժողո-
վրդական-հասարակական կեանքին տալիս են մի
մեծ, սոսկալի բարոյական հարուած և սրունք յա-
ճախի, խոչնդոտ են հանդիսանում ճշմարիտ և ան-
շահասէր դադարների ազատ տարածութեան:
Այսպիսի կոյր դատողութիւններից, կամ հա-
յեացքներից մինն էլ այն է, թէ մենք սպասենք
և ժամանակն ամեն բան կը կատարէ... Որքան
ցաւալի է այն ժողովրդի վիճակը, որը մասնավոր
է այսպիսի ինքնախաթմութեան: Ժամանակը ոչ
մի գործ, ոչ չորսի ժողովրդի հասարակական
կեանքի հետ. նա պահանջում է ամեն մի հասա-
րակութիւնից, որ սա իրան (ժամանակին) համա-
պատասխան կեանք ունենայ, հակառակ դէպ-
քում, այսինքն այն ժամանակ, երբ մի ժողովուրդ
անընդունակ լինելով ընդունելու ժամանակի խ-
կական, արդարեւոր հոգին, ինքն իրան մատ-
նում է հասարակական ինքնիշխան—ահա
այն ժամանակ կատարվում է մի սարսափելի,
պատմական փառս,—ժամանակը կործանում, ոտ-
նախել է անուամբ, բնաշնչում է նրան և նախկին
փառքի տեղ թողնում է միայն տիւրս, խիստ
ցաւալի յիշատակներ: Հի տ ե ի բ ո ճ, Գ ա մ
մ ե ո ի բ ա ն վ ե ռ ա ղ ա ռ ձ Կ Ե Ր Ա Պ Ո Ւ — ահա
ժամանակի անդրում դէվիլը: Բայց հի տ ե
ւ ե լ,—չարտնակ առաջադիմութեան մէջ լինել
անդադար դէպք առաջ ընթանալ և ոչ թէ ձեռ-
քեր ծալել և կուրօքն յանձնել ձակատաքին
ու սպասել, որ ժամանակն իր կապիւրդ կատա-
րէ, իր ոչնչացող դրոշմը խփէ ժողովրդի կեան-
քի վրա:

Կրկնելով վերոյիշեալ հոդաւ անգամ կրկնված
ճշմարտութիւնները, մենք միտք ունենք մատ-
նացուց անել մի անհրաժեշտ խնդրի վրա, որը
այս է.—ամեն մի հասարակութեան մէջ կենդա-
նութեան ցնցումներ են երևում միայն այն ժա-
մանակ, երբ այդ ժողովուրդն ունի իր համար մի
մտածող դատակարար, ղեկավարող ոյժ, կարճ ա-
սենք, ին տ ե ի ղ է ն ց ի ա: Այդ ամենամահա-
ժեշտ տարին է, որը օգնում է այնպիսի նը-
պաստաւոր հանգամանքների ծնւելուն, որոնցից
առաջ է դալիս հասարակական կեանքը, իսկ ին-
տելիգենցիան կազմակերպվում է, այսինքն աւելի
պարզ ասելով, զոյութիւն և սկիզբն է առնում
կանոնաւոր և սխառնական ուսումնարաններից,
որոնք ներկայանում են մի-մի գլխաւոր ֆակտոր-
ներ: Ի հարկէ, սրանով չենք ուղում ասել, թէ
ամեն մի ուսումնարան ինտելիգենցիական ճըք-

տուներով տողորված է լինում, բայց նայելով,
թէ ինչ սխառնում է հոգեկան նիւթ մատակա-
րարվում այս կամ այն դպրոցական հիմնարկութեան
մէջ, մենք դրան համապատասխան արդիւնք էլ կը
ստանանք:

Շատ վաղուց չէ, որ անցել գնացել են այն
օրերը, երբ պարսկահայոց դպրոցները, աւելի
ճիշդ կը լինէր ասել, խալիֆայական խցիկները
ներկայացնում էին մի-մի ապարաններ, որոնց
մէջ մանուկը բացի ապուշ լինելուց, ուրիշ ոչ մի
հոգեկան մտնող չէր ստանում: Անցնում են մի
քանի այդպիսի տխուր տարիներ և ահա մի նոր,
աւելի լուսաւոր հոսանք մուտք է գործում Պարս-
կաստանում. այդ հոսանքը գալիս է Կովկասից:
Այդ մի կողմից, իսկ միւս կողմից էլ պարսկա-
հայն անդադար չփակվով եւրոպական Ռուսաստա-
նի և Կովկասի հետ, մի պահանջ է գրում, այն
է՝ ունենալ փոքր ի շատէ կանոնաւոր դպրոցներ,
որոնց նախաձեռնող հանգիստնում է Արապատա-
կանում՝ Թաւրիզը: Այն օրից, երբ մի այդպիսի
պահանջ կատարումն է ստանում, պարսկահայը
մանում է դարգացման պատմական սկզբնական
ֆազիսի մէջ, որովհետեւ այդ դէպքի կերպարա-
նախկնութիւնը ցոյց է տալիս, որ նրանում չէ մե-
ռել ժամանակից յարմարաւոր կերպով օգտուելու
ընդունակութիւնը. սակայն պէտք է խոստովա-
նել, որ այդպիսի սկզբնական քայլերը դեռ ևս
վերականգնման նշաններ չէ կարելի համարել և,
հետեւապէս, իրանք իրանցից տակաւին թոյլ լի-
նելով՝ մի առժամանակ քաջաշինելով են քայ-
լում: Այդպիսի խորտուները իրանց մէջ չունե-
նալով բուսական կենսական ոյժ,—գլխավորու-
թիւն, ենթակայ են լինում շուտով դադարելու,
բայց ոչ մեռնելու և ահա, այսօր, այդ խիստ չա-
փաւոր քայլերը կրկին վեր են կենում, շարժվում
են, որոնցից ծնունդ են առնում ընկերութիւն-
ներ, կիրակեայ դպրոց, գրական երկնայիններ,
ներկայացումներ և այլն:

Ի հարկէ, պարսկահայը դեռ ևս դարգացման
այն աստիճանի վրա չէ կանգնած, որ ընդունակ
լինէր ինքնուրոյն, սեփական ինտելիգենտ ոյժ
կազմակերպելու և ահա, այսպիսի հանգամանք-
ներում երեան է գալիս մի փոքրիկ խմբակ երի-
տասարդներին, որը տողորված լինելով իդէալական
ձգտումներով, ինչպէս,—չէ, ինչպէս—հոգեւորային
զեր է կատարում և իր հեռանդոտ ու տոկուն ճի-
գերով ցոյց է տալիս հիւսնալի աշխուրդիւն իր
ստանձնած դերի մէջ: Այդ նորաբողոք խմբակը
(ի պատիւ իրանց) յայտնում ենք, որ Թաւրիզի
ուսուցչական խումբն է: Որքան ուրախալի է
տեսնել, որ տասնեակ անդադար երիտասարդ-
ներ,—գլխավորապէս արհեստաւոր դասակարգից,
հաւաքվելով ուսումնարանի շէնքում, սովորում են
իրանց մայրենի լեզուով գրել և կարդալ, Լը-
ուում են դանազան օգտակար նիւթերի մասին
դասախօսութիւններ, ներկայ են լինում թատրո-
նական ներկայացումներին և այլն: Զոյց տալու
համար թէ ժողովուրդն ինչպէս է վերաբերվում
դէպքի այդպիսի շարժումները, այստեղ ևս կը հա-
ղորդում իմ տպաւորութիւնները և դիտողութիւն-
ները գրական երկնային մասին, որը կայացաւ
անցեալ երեքշաբթի, փետրվարի 11/23-ին, և որը
կազմված էր յոգուա կերպական դպրոցից:

Գրական երկնային տեղի ունեցաւ «Վիւլայի»
թատրոնական դահլիճում. հանդիսատես ժողո-
վուրդը բաղկացած էր մեծ մասամբ վոճառական
դասակարգից և այդ, շատ հասկանալի պատճա-
ռով,—որովհետեւ արհեստաւորը երկնային վաս-
տակած վերադառնում է տուն, մի կտոր հաց
է ուտում և քնում է: Գրեկից ծանր աշխատու-
թիւնից յետոյ, նա չէ կարող չը հանգստանալ,
որովհետեւ յաջորդ օրը նա դարձեալ պէտք է աշ-
խատէ, իսկ եթէ այդ պահանջ երկնային կայա-
նար չաքայթ գիշերը, այն ժամանակ աւելի մեծ
թւով արհեստաւորներ ներկայ կը լինէին, որով-
հետեւ յաջորդ օրը կիրակի լինելով՝ աշխատանքի
չեն գնում: Ընդհանրապէս ասելով՝ բաւական
քաղցր տպաւորութիւն գործեց երկնային: Կար-
դացիկցան մի քանի դասախօսութիւններ, բանա-
ստեղծական կտորներ Գամառ-Քաթիլբայից, եր-
գում էին ուսումնարանի սանտահիւք և սաները
շուրթակի ձայնակցութեամբ: Գրական երկնային
մի քանի պակասութիւնները պէտք է վերաբերել
այն հանգամանքին, որ առաջին անգամն է, որ
այդպիսի մի գեղեցիկ երկնային է տեղի ունենում
Թաւրիզում և, հետեւապէս, պէտք է եղարկացնել
և յուսալ, որ յաջորդ անգամներում բոլոր պա-
կասութիւնները կը լինեն...:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍՏԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐՈՒԴԻ, 26 փետրվարի Այսօր թագաւոր
կայսրի ծննդեան օրը, ջմերային պալատում մեծ
ընդունելութիւն կար, շնորհաւորութիւններին հա-
մար:—Պետական խորհրդի անդամ Աբգաղայի նա-
խագահութեամբ սկսեց իր գործունէութիւնը այն
յանձնաժողովը, որը կոչուած է մայրաքաղաքի յանձ-
նաժողով, որը պէտք է մշակի աշխատական կա-
լուածաժողովները պահպանելու հարցը:—«ՀՈ-
ԲՈՇՄ» լրագիրը հաղորդում է, որ փոքրամասն
տնտեսականներն և գիւղական ստորադասները ղեղ-
ծումները վերացնելու համար, որ նրանք գործ
են ընդամենը հարկեր վճարելու և նոր անցա-
գրեր տալու նպատակով պահպանելու գիւղացի-
ներից ուղարկած փողերը ստանալու, փոքրամաս-
նի վարչութիւնները պէտք է ունենան ժապաւի-
նակ մատակարար, որոնց մէջ պէտք է յիշատակ-
վի ստացված գումարի մասին և ներկայացվի
պատմութիւն:—Այսօր Պետերբուրգի բանտային մաս-
նաժողովի փոխ-նախագահները, ղերեկաօրները և
անդամները մի ճաշ առեցին ի պատիւ երգիչու
հաւատարմատար խորտուղարին, որը 25 տարի
վարել է բանտային մասնաժողովի ղերեկաօրի
պաշտօնը: Երբեքարին ներկայացվեց ուղերձ:
ԲԵՐԼԻՆ, 26 փետրվարի: Այսօր Վերլինի I
կայսրի մահվան տարեդարձի օրը, թագաւոր կայս-
րի ծննդեան առիթով լինելի ճաշը տեղի կունե-
նայ նոցա միջոցովները մօտ միայն վաղը: Ճաշին
հրաւիրված են ուսուցիչ դասաւանդական անդամ-
ները:—Բերլինի վրայով անցան, ուղևորվելով դէ-
պի Գարմաշտատ, Մեծ Իշխան Սերգի Ալեքսանդրո-
վի իր ամուսնու հետ: Գերմանական այլի թա-
ղուհին և պրինցուհի Մարգարիտը այցելեցին Դո-
ցա Բարձրութիւններին «Hôtel Continental» նա-
ւանադատում:—Վերլինի կայսրը շնորհեց գեներ-
ալ Կուտուզովին իր պատկերը, որ պատրաս-
տել է Լէնքալս:

ՊԱՐԻՉ, 26 փետրվարի: Երէկ վճիռ կայացաւ
միացնելու գաղութականներին միմիատրութիւնը ծո-
վային միմիատրութեան հետ:
ՊԻՐԷՅ, 27 փետրվարի: Երէկայ բանկէտում,
ուսուցիչ ժողովարար յիշելով այն ջերմ ընդունե-
լութիւնը, որ ցոյց են տուել ֆրանսիացի ծովա-
գնացները ուսուցիչ ժողովարարին, առաջարկեց
նախագահ Կարմի կենացը: Կարմի Մոնտրօն
պատասխանեց, որ ֆրանսիացիք բերկրութեամբ
են հանդիպում ուսուցիչ ժողովարարին ի յիշա-
տակ Կրօնշտատի տեսութեան: Իր ճառը կոմս
Մոնտրօն աւարտեց առաջարկելով թագաւոր
կայսրի և կայսրական Տան կենացը:

ՏԵՂԵԿԱՑՈՑՑ

ԱՆԴՐԱՊԱՎԱՍՏԱՆԵՐ ԵՐԱԹՈՒԴԻ

Հանապարհորդական գնացքներ թիֆլիսի և Բա-
թումի մէջ.

№ 1

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է 9 ժ. 45 ր. առաւ.
ԹԻՖԼԻՍ հասնում է 9 > 52 > երեկ.

№ 2

ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է 9 ժ. 30 ր. առաւ.
ԲԱԹՈՒՄ հասնում է 9 > 45 > երեկ.
Պատասխան գնացքներ Բաթումի և Բաղուի մէջ.

№ 3

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է 11 ժ. 25 ր. երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է 12 > 25 > ցերեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է 1 > 20 > ցերեկ.
ԲԱԹՈՒՄ հասնում է 7 > 30 > առաւ.

№ 4

ԲԱԹՈՒՄԻՑ մեկնում է 11 ժ. 10 ր. գիշեր.
ԹԻՖԼԻՍ հասնում է 5 > 50 > երեկ.
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է 6 > 50 > երեկ.
ԲԱԹՈՒՄ հասնում է 8 > 15 > առաւ.

Խառն գնացքներ թիֆլիսի և Գանձակի մէջ
ԹԻՖԼԻՍԻՑ մեկնում է 9 ժ. 20 ր. երեկ.
ԳԱՆՁԱԿ հասնում է 10 > 10 > առաւ.
ԳԱՆՁԱԿԻՑ մեկնում է 7 > 35 > երեկ.
ԹԻՖԼԻՍ հասնում է 7 > 30 > առաւ.

ՈՒՈՍԱՑ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՒԿԵՆԱԻՐ

Հիւր-ԶԱՐԹԻ, 4 ժամին երեկոյեան, շրջական
ընթացով, Բաթումից դէպի Օդեսա.

ԶԱՐԱԹ, 8 ժամին երեկոյեան նմանապէս:
ԵՐԱԹՈՒՄԻՑ, 7 ժամին երեկոյեան, Բաթում-
մէջ դէպի Կ. Պոլիս:

Խմբագիր-հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻԳԱԿԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԼ ԱՐ-
ՀԵՍՏԱՆՈՑԻ ԱՐՀԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՑԵԱՆ ԴԱՍԵՐ.

1) Հանդերձներն և սպիտակեղէնի ձեւի դասեր Գլոգլինսկու մեթոդով և Շէպերի
Ֆրանսիական մեթոդով:

2) Կարի դասեր մօղային ժուրնալներով:

3) Հարթակարի և զանազան ձեռագործերի դասեր:

4) Դասեր տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիներ պատրաստելու հա-
մար:

Վճարը ամսական 2 լուբլի, երկու անգամ շաբաթը 5-ից մինչև 7 ժամը երեկո-
յեան:

Տարրական և ծխական դպրոցների ուսուցչուհիները կարող են այցելել դասերը
ձրի: (№ 23) 2—40

ՓՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍՍՃԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՈՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ
Ուբբաթ, 6/18 մարտի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ LE CAMBODGE (ԿԱՄԲՈՋ)
նաւապետ NIEL (ՆԻԵԼ) դէպի Կ. Պոլիս, Մարսէլ, Հալը, Լոնդոն, մոնեթով և միջանկեալ
նաւահանգիստները:

Ագէնտները՝ ԲԱԹՈՒՄԻՄ՝ ՄԱՍՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍԻՄ՝ ԳԵՈՐԳ ՀԵՋՈՒԲԵԱՆ ՀԵՋՈՒ-
ԲԵԱՆՅ, Իսկ ԲԱԹՈՒՄԻ մէջ՝ ԳՕԼԻՒՈՒՍՏ: (№ 23) 1—2

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ սրանով տեղեկաց-
նում է ընդհանուր դիտութեանը, որ այս 1892 թւի մարտի 3-ին, իր գրասենեակում,
ցերեկայ 12 ժամին կը կայանայ աճուրդ՝ կապով տալու քաղաքային հողի մի կտորը
213 ք. սաժէն տարածութեամբ, փայտեր դարսելու համար, Մաքսատան դիմաց, 10-դ
քաղաքամասում, որը այժմ կապով ունի վերքրած վասիլից Բիսիլից: Պայմանների մա-
սին կարելի է տեղեկանալ վարչութեան գրասենեակում, բացի տօն օրերից, առաւօտեան
10 ժամից մինչև 2 ժամը: 2—2

Մի Օտարաքաղաքացի ՏԻԿԻՆ կամենում է պարագմունք ունենալ մի որ և է
խմբադատան կամ գրասենեակում, կամ վերջապէս մի որ և է առևտրական հիմնար-
կութեան մէջ: Գրեւ հաշւապահութիւն: Գրեւ «ՄՇԱԿԻ» խմբագրութեանը: 3—5

ՏՐԱՌՈՒՄ է վարձով 7 սենեակից բաղկացած մի ԲՆԱԿԱՐԱՆ, բոլոր յարմա-
րութիւններով. (№ 18) ԲԱՐՈՆՏԱԿԱ ՎԼԻՍԱ, ԴՈՄԵ № 15. 5—5

(№ 19) Գ. Գ. ԼԱՐՇԵԻ ՍԵՐՄԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ
Միջալոյսի կամուրջի վրա, անգղիան № 174, ՍՏԱՑՎԱԾ ԵՆ ԹԱՐՄ ՍԵՐ-
ՄԵՐ ԲԱՆՁԱԲԵՂԻՆՆԵՐԻ ՆԻ ՄԱԼԻԿԵՆԵՐԻ:
Պրէյսկուրանները ուղարկվում են ձրիապէս: 6—25

ԱՌԱՋԻՆ ԶԻԹԱՀԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ
Յ. ԹԱՅԻՐՈՎԻ ԵՒ Կ. ԱԼԻՍԱՆՈՎԻ

ԹԻՖԼԻՍԻՄ
Մեծ պատի համար գործարանում կայ մեծ քանակութեամբ ծախելու համար հե-
տեւել տեսակների ԶԵԹ. 1) ԿԵՐԱԿԻՐԻ քունջութի, կանեփի, կտաւաթի. 2) ԱՅՐԵԼԻՍԻ,
3) ԵՓԱՍՏ՝ ներկելու համար, այլ և կովեր և եղներ կերակրելու համար: Գունջութի ձե-
թը մաս մաս ծախվում է մէկ և երկու ֆունտանոց ամաններում հետեւել խանութ-
ներում: 1) Դեղատան ապրանքները կովկասեան ընկերութեան վաճառա-
տանը. 2) Ջովանիի խանութում, Գոյովինսկի պրոպէկտ, տուն Գործմանկու և
Վորոնցովի արձանի մօտ. 3) Ալիխանովի խանութում, Գոյովինսկի պրոպէկտ. 5)
Բեթանովի խանութում, Միքայէլեան փողոց. 6) Բաքարովի խանութում,
Նիկոլայեւսկայա փողոց, սեփական տուն. 7) Վարվարովի խանութում, Գոյովինսկի
պրոպէկտ տուն Օրբելիանի. 8) Սարաջեւի խանութում, Գոյովինսկի պրոպէկտ,
տուն Բաքարեանովի:
Բոլոր տեսակ ձէթերի մաս մաս վաճառումը սեփական վաճառատներում: 1) Սոլ-
դատովի բաղար, տուն Բուդախովի, մասվաճառները մօտ. 2) Թուրքաց Մայ-
դան, քաղաքային բուտայում: 3) Օլգինսկայա փողոց, տուն Մեքուրնութովի, քա-
րածուխի պահեստի կողքին և 4) Հաւաւ բաղի հրապարակ, քաղաքային բուտ-
կա № 1:
Պահեստը և գրասենեակը գտնվում են Երևանեան շուսէյի վրա, սեփական տանը
(№ 18) 5—14 (Կ. 2.)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
ՓՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳԵԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Հողեւանների կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ, չորեք-
շաբթի օրերը, երկուշաբթի մի անգամ, չորեքշաբթի 25 ղեկտեմբերից (6 յունվարից)
սկսած և փոխադարձ:
Բաթումից Մարսէլ, մոնեթով Տրապէզոն, Սամսոն, և Կ. Պոլիս:
ԲԱԹՈՒՄԻՑ ՇՈՒԿԵՆԱԻՐ ԳՈՐԾԱՐԱՆ ԳԱԼԻՍ
Չորեքշաբթի, 19 փետրվարի (2 մարտի) շոգենաւ ԱՐՄԵՆԻԱ նաւապետ ՏԻՐԱԼ
— 4/16 — — — — —
— 18/30 — — — — —
— 1/13 — — — — —
ապրիլի — — — — —
և այլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ օրերը, 4 ժամին կհասնի յետոյ:
Տօմսկիների գները ուղղակի երթևեկութեան Բաթումից դէպի Պարիզ խախան գնից
պակեցրած են:

Տեղեկութիւնները համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճին
գրեւ ընկերութեան ագէնտներին. ԲԱԹՈՒՄԻՄ՝ պ. Գարանիսին, Նաբերէժնայա,
ԹԻՖԼԻՍԻՄ՝ պ. Վիկտոր ԴԱՐՆՈՒՆ, Միջին-փողոցում, նախկին ղեկերայ Տէր-Ասատուրովի
տանը, ԲԱԹՈՒՄԻՄ, Սամսոն Գիլլարովին, Կոլլաբիսկինսկայա հրապարակ, և ՆՕՎՈՐՈՍԻՑ-
ՍԿԻՄ՝ պ. Լուի Բընօն:
(№ 124) 7—10 (Կ. 2.)

Հազար շնորհակալութիւն թաւրիղի ուսուցչա-
կան յարգելի խմբին, որ մի այդպիսի գեղեցիկ,
յամենայն դէպս, համակրելի միտք է յղացել և
իրականացրել է այդ միտքը: Թաւրիղի հայ հա-
սարակութիւնը պարտաւոր է ամեն կերպով խը-
րախուսել այդ տեսակ ձեռնարկութիւնները, լաւ
հասկանալով, որ ձեռնարկողները ժողովրդի աշ-
կեղծ բարեկամներն են, որոնք տողոված են
ժողովրդի բարօրութեան համար. անձնատուրա-
բար գործելու առաջիկ իղձերով: Ի վերջոյ մի
նկատողութիւն էլ. հայ հասարակութիւնը դեռ
ևս բոլորովին թօթափած չէ լինելով նախապա-
շարմունքը, իգական սեռին մարդկային արժանա-
ւորութիւնից զուրկ է համարում և այդ պատճա-
ռով հայ կինը իր բացակայութեամբ փայլում է
հասարակական գործերում...
Թաւրիղ. Թ.

ՏԵՂԵԿԱՑՈՑՑ Կ. ՊՕԼԻՍԻՑ

Կ. Պոլսի «Հայրենիք» լրագիրը հետեւեալն է
գրում.

«Ինչպէս յայտնի է, կաթողիկոսական ընտրու-
թեան ժամանակը կը մօտենայ և տալաւին մեր
կողմէ՞ ո՞ր և է պատրաստութիւն չէ տեսնուած
այս ընտրութեան մասնակցելու համար, մինչդէռ
1886-ին, 1884-ին և 1885-ին պատրաստութիւնը
ընտրութեան չափ առաջ տեսնուած էին: Արդ,
ս. պատրիարք հայրը, նկատելով որ Թիւրքիոյ հա-
յոց կողմէ եկեղեցական և աշխարհական պատ-
գամաւորներու հաւաքումն ի ս. Էջմիածին՝ կա-
թողիկոսական ընտրութեան մասնակցելու հա-
մար, կը համապատասխանէ Հայաստանեայց ե-
կեղեցւոյ աւանդութեանց, որոշած է այս մա-
սին ս. Էջմիածին պիտոյին կողմէ եկած հրաւի-
րագրերն յղել զաւանդները:»

«Կրօնական և քաղաքական ժողովներն երէկ
Ղալաթիա խառն ժողով գումարեցին ս. պատ-
րիարքի նախագահութեամբ, որոնցման զանազան
խնդիրներով, և հետեւեալ տնօրէնութիւններն ըրին:
Ս. Նախագահն յայտնեց թէ Ազգային ժողովի
նստին յետաձգման պատճառաւ ինքն առաջնորդ-
ներուն զրկած է շրջաբերականով մը ս. Էջմիած-
նի սինօզին եկած ծանուցումները ամենայն հա-
յոց հայրապետի ընտրութեան մասնակցելու հա-
մար: Այդ շրջաբերականով ճշդուած են պատգա-
մաւորներու ընտրութեան մասին կատարուելիք
գործողութիւնները: Ժողովը տեղեկանալով այս
տնօրէնութեան, կարգաց շրջաբերականը և ըն-
դունեց կատարուած գործողութիւնը, ու գոհու-
նակութիւն յայտնեց ս. պատրիարք հօր:»

«Խորէն Նար-Պէյ արք. եպիսկոպոսի դէմ հրա-
տարականաւ պատրիարքական կոնդակը այս շաբ-
թու զրկուել է նաև յԱմերիկա առ Յով. Վ. Սար-
րանեան, որպէս զի Ուսթիլի հայ եկեղեցիին մէջ
կարդացուի:»

Անցեալ անգամ հաղորդեցինք Կ. Պոլսի Նիւի-
Գարուի հրդեհի մասին. ահա մի քանի տեղեկու-
թիւններ են. «Հրդեհը ծագել է ըստ ոմանց
նպարախճածուի մը խանութէն, ըստ ոմանց Ալա
Պոյաճի փողոցն Նիւնի անուն հայ կնոջ մը
տունէն զոր վարձած էին Օսմանէ և Նիկողոս
անուն երկու անձեր: Այլաւ տուններուն թիւը
թէ և նակալին պատճառապէս չէ յայտարարուած՝
բայց իբր ստոյգ կըսուի թէ՛ ընդամենը այրել
են 111 տուն, որոց 5-ը իսլամի, 13-ը Յօրի և
93-ը հայոց: Եկեղեցիի մօտաւար կինն որ այրուել
է կը կոչուէր Անթառա, Եւստուս անուն ջրհան-
կեր մը որ փորձել է աղատել այրուող կին մը,
վերաւորուել է զլէնէ: Կորուստը 50,000 ոսկի
կը հաշուէ:»

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պարիզից հեռագրում են, որ նախկին մի-
նիստը Կոնստան մերժեց ընդունել Լոնդոնի
Ֆրանսիական դեսպանի պաշտօնը:

—Փոքր-Ասիայում հրատարակող թիւրքաց լրա-
գիրները հաղորդում են, որ վերջին ժամանակ-
ներս այդտեղ առաջ են եկել բազմաթիւ աւա-
զակային խմբեր:

—Աթէնքից գրում են, որ թագաւորի և այժ-
մեան մինիստրութեան յարաբերութիւնները բոլո-
րովին լարված կերպարանք են ստացել:

